ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«04» Հոկտեմբերի 2016թ. № 184-Ա

ԳՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա», «բ» պարբերությունների, 20-րդ կետի 1-ին ենթակետի, 22-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2016 թվականի հոկտեմբերի 12-ի N 29-Ա/1 հրամանը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1294-Ն որոշման հավելված N 1-ի 48-րդ կետի 6-րդ ենթակետը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 2-ի N 947-Ն որոշմամբ հաստատված «Երևանի Ս. Հովսեփյանի անվան N 115 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության N 3 մասնաշենքի տանիքի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման

- գնման գործընթացների գնումները համակարգող նշանակել ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի կառուցապատման ներդրումային ծրագրերի վարչության գլխավոր մասնագետ Մարիամ Սարգսյանին:
- գնման գործընթացները կազմակերպելու համար սահմանել պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով.

Արթուր Սարգսյանց	ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի կառուցապատման ներդրումային ծրագրերի վարչության պետ (ղեկավար)
Հրաչյա Եղոյան	ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի կառուցապատման ներդրումային ծրագրերի վարչության գլխավոր մասնագետ

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Պաշտոնակատար՝ Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

«____ » _____ 20 . թ.
ք.Երևան